

“ՓՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆՔ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ ԺԸ 16.

ՀԱՏՈՐ ԼԵ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՐՏ 1, 1906

ԹԻՒ 3

ՀԻՄՆԱԿՆԵՐ ՄՈՒՊԵՐՈՑ ԲՆԻԿՆԵՐԸ
 1897 Յուլիսին Անտրէ Գաղղիացին
 և երկու ընկերները Սփիցպէրկ կղզի-
 քն ճամբայ ելան օդապարհով, յու-
 սալով թէ այդ կերպով կրնային Հիւ-
 սիսային Բևեռ հասնիլ: Թէ անոնք ի՞նչ
 եղան, ոչ ոք գիտէ. բայց յաջորդ-
 տարին Շուեռական կառավարութիւ-
 նը երեք մարդէ բաղկացած խմբակ
 մը զրկեց զանոնք փնտռելու համար:
 Այս երեքէն մէկն էր Անտրէի ընկեր-
 ներէն մէկուն եղբայրը. Մարգիկը
 գացին Եաքութսը (Սիպերիա) լէնա
 գետին վրայ քաղաք մը, այնուհե-
 տև գետէն վար նաւեցին դէպ ի ա-
 նոր բերանը Արջային Ովկիանոսին
 մէջ: Անկէ ճամբորդեցին ցամաքով
 1.600 մղոն, եղնիկներէ քաշուող բաւ-
 խրներով դէպ ի Ենիսէյ գետին բե-
 րանը: Անոնք տեսան այն տեղը ուր
 1881ին անօթութեանէ մեռան Նաւա-
 պետ Տը Լոնկ, Ամերիկացի երկրա-
 խոյրը և անոր ընկերներէն մէկ քա-
 նին: Խաչի ձևով յիշատակարան մը
 կը կանգնէր անոնց գերեզմաններուն
 վրայ: Բայց Անտրէի և անոր ընկեր-
 ներուն հետքը չգտան:

Այդ երկրին բնիկները Եաքութսը
 կը կոչուին: Առաջ անոնցմէ 1,000
 հոգի կը բնակէին Լենայի տէրջային,
 այսինքն անոր բերաններուն մէջտեղ
 ձևացած եռանկիւնաձև ցամաքին,
 վրայ, բայց կէսը մեռան ծաղկախախ-
 համաճարակէ մը: Բնիկները Յունիս
 ամառն կղզիները կ'երթնան ծովային
 թռչուններու հակիթներ և փետուր
 ժողովելու: Աւելի վերջերը կ'որսան բազ-
 մաթիւ վայրի սագեր: Անոնց գլխա-
 ւոր ուտեստն է ձուկ, անկէ ետքը
 Բյնտիբ կոչուած վայրի եղնիկը: Այս
 կենդանիները կղզիները կ'երթնան ա-
 մառը և երբ աշունին ետ կը գառնան,
 բնիկները իրենց նաւակներուն մէջ

պառկած անոնց կը սպասեն և կը
 սպաննեն զանոնք նիզակներնուն եր-
 կաթ ծայրերովը: Ամեն տարի հազա-
 րէ աւելի կը սպաննուին տէրջային
 մէջ: Արշաւախուժին պետք Մր. Սթար-
 լինկ և անոր ընկերները եղնիկի չոր-
 ցուած միս և սառած ձուկ կ'ուտէին
 երբ հանդիպէին բնիկներու խըր-
 ճիթներու: Բնիկներուն կիները փո-
 խանակ սեղանի կտաւ փռելու քերի-

փելու համար: Այր մարդոց գործն է
 որսորդութիւն և ձկնորսութիւն: Աղ-
 շիկները կին կ'առնուին անոնց հայ-
 րերուն վճարուելով որոշ գին մը:
 Տարօրինակ սովորութիւն մը սա է որ
 հարսը իր հոր տանը մէջ կը մնայ ա-
 մասնութեան արարողութենէն մինչև
 երեք ամիս ետքը, և այնուհետև
 կ'երթայ բնակիլ իր ամուսնին հետ:

—•••••



չով (բենտէ) կը քերէին փայտէ սե-
 ղանին երեսը, և նորք տաշեղներ կը
 գործածուէին իբրև անձեռոց (փշ-
 կիր), կին մարդոց գործը դժուար
 է, վան զի պէտք է որ խաղախորդեն
 (կաշի շինեն) եղնիկի մորթերը, ըն-
 տանիքին հանդերձները պատրաստեն
 և նորոգեն, եղնիկի մորթէ վրանները
 կանգնեն, փայտի տաշեղ ժողովեն, և
 սառ բերեն ու հալեն կերակուր ե-

ՀԻՄՆԱԿՆԵՐՈՑԻՆ ՄՈՒՊԵՐԸ
 “Ուր կա՞ր կայ, ճամբայ կայ”
 բայց խնդիրն այն է թէ ի՞նչպէս գրա-
 նելու է ճամբան: Շուշան շատ անգամ
 խորհած էր ատոր վրայ: Ստակ շատ
 չկար, և չէր գիտեր թէ ի՞նչպէս պիտի
 կրնար ստակ ձեռք բերել հիւանդա-
 նոցին օգնելու համար: “Ընթրիքի
 համար կարագ չկա՞յ,” ըսաւ հայրը:
 “Ո՛չ,” պատասխանեց մայրը, “մուկ

մը ինկեր էր ամանին մէջ. ջեմ գիտեր ինչ ընելու է այդ մուկերը, շատ նեղութիւն կու տան մեզի: Ամէն բանի մէջ կը մտնեն, պահանջող կը մտնեն, կը կարտեն շարս և ամէն ասակ չարիք կ'ընեն: "Եկատու մը պահեցէք," ըսաւ Յովհաննէս: "Եկատուներն ալ աւելի հաւու ձագերը կը բռնեն քան թէ մուկերը," պատասխանեց մայրը: "Թոյն դրէք," ըսաւ Աշոտ: "Ոչ," ըսաւ հայրը, "ես կը վախնամ ասդին անդին թոյն դնելէ, ես թակարդ մը պիտի առնեմ եթէ ձեզմէ մէկը նայի անոր:" "Ես կը նայիմ," ըսաւ Շուշան: "Հայր ես հիւանդանոցին օգնելու, ստակի պէտք ունիմ, և ընելիք ուրիշ բան միտքս չի. նար: Ինծի քիչ մը բան վճարէ ամէն մէկ մուկի համար և ես թակարդը լարելու և անոր մէջ խայծ (կեր) դնելու հոգը վրաս կ'առնեմ:" "Շատ ազէկ, ես ամէն մէկ առնէտի համար քեզի կու տամ 50 փարա, և ամէն մէկ մուկի համար՝ 30 փարա: Եւ ինծի աւելի շահաւոր պիտի ըլլայ ատիկա քան թէ քեզի:" "Առնէտ բռնե՛ր," ըսաւ Ռենիկ հեգնութեամբ, և երբ մայրը իր մատով նշան ըրաւ, Շուշան ըսաւ, "Պիտի ջանամ բռնել զանոնք:"" Թակարդը եկաւ և Շուշան գործի սկսաւ: Առնէտի թակարդները դրուեցան ամբարանոցին և եզիպտացորենի շտեմարանին մէջ, և մուկիները մատանին, պահանջին և դարակին մէջ: Շուշան օրը քանի մը անգամ կ'երթար կը նայէր թակարդները ամէնն ալ, և ստակը սկսաւ առատօրէն վազել, այնպէս որ հայրը ըսաւ թէ գինը իջեցնելու է. բայց Շուշան չթողուց: Շուշան քանի մը օրը անգամ մը տաք օճառաջրով կը լուար բոլոր թակարդները, վան գի անոնք պէտք էր որ մաքուր ըլլային: Այնուհետեւ պանրի կտորներ կը խորովէր հրապուրիչ խայծ ընելու համար զանոնք: Միայն վեց շաբթուան մէջ Շուշան բռնեց էր 28 մուկ և 33 առնէտ, Հայրը վճարեց ամէնուն համար ալ. քանի՞ անգամ հաշիւ ըրաւ Շուշան: 30 անգամ 28՝ կ'ընէ 840 փարա կամ 21 դահեկան մուկերուն համար, 50

անգամ 33՝ կ'ընէ 1,650 փարա կամ 41 դահեկան 10 փարա առնէտներուն համար, Գումար՝ 62 դահեկան 10 փարա: Ո՛հ, այս սրչափ ստակ է: Շուշան իր մօր դրամի քսակը առնելու պէտք ունեցաւ ստակը մէջը դնելով կիրակնօրեայ դպրոց տանելու համար: Ինչպէս հաճոյք զգաց երբ վարժուհին կարգաց անունները և տրուած գումարները, պատմելով հանգերձ թէ այլիկները ինչպէս վասակած էին զանոնք: Դպրոցին մէջ գլխի թորը գանուողները բացին իրենց աչքերը երբ Օրիորդ Ովաննա

եմ, և կը խորհիմ թէ կ'արժէ որ քեզի քիչ մը ստակ վճարեմ իբրև վարձք մեզ մուկերէն և առնէտներէն ազատելու: "Շատ աղէկ," ըսաւ Շուշան, "գիտեմ թէ մայրս հրաման պիտի տայ, և բոլոր տղոց ու աղջիկներուն պիտի ըսեմ որ իրենք ալ մուկ և առնէտ ջնջելով օգնեն հիւանդանոցին:"

ՌԻՕ ԿՐԱՆՏԷԻ ԳԱՆՆՈՆԸ

Միտիսիփի գետէն ետքը, Մեքսիքոյի ծոցը թափող ամէնէն մեծ գետն է Ռիօ Կրանտէ, որ Միացեալ Նահանգներուն և Մեքսիքոյի մէջտեղի սահմանադիմն է: Նաւարկելի գետ չէ, այլ մղոններով կ'անցնի ապառաժի մէջ բացած ճամբայէն. ապառաժէն վեր զառիվեր պատեր շատ կը բարձրանան գետին երկու կողմը: Ապառաժ պատերու մէջէ անցնող գետի այս ճամբան Գանետն կը կոչուի Սպաներէն լեզուով: Աշխարհիս ամէնէն մեծ գանետները Ամերիկեան Ռիօ Կրանտէ և Քոլորադո գետերուն վրայ են: Ռիօ Կրանտէի գանետներէն մէկուն երկայնութիւնը տասներկու մղոն է և մինչև մօտերս երբեք անցնող եղած չէր անկէ: Չուրը արագ կը վազէ և շատ ժայռեր կան գանետին մէջ, և միայն նաւավարին մեծ հանճարը և ոյժը կրնան պահել նաւակները ջախջախուելէ: Եթէ ջուրը յանկարծ բարձրանայ, ինչպէս կը պատահի անձրևէ ետքը, այդատեն գանետին մէջ զբանուողի մը անկարելի կ'ըլլայ ազատուիլ: Տեղ մը ժայռերը գետէն մինչև 700 կանգուն վեր կը բարձրանան. Գանետին վրայ նաւարկողներու դիտած բաներէն մէկը սա է որ կեանք գրեթէ բնական անոր սահմաններուն մէջ: Ոչ չորքոտանի տեսնուած է հոն և ոչ թռչուն բացի մասնաւոր տեսակ մը չղջիկէ:



կարգաց. "Շուշան Յովհաննէսեան 62 դահեկան: Վաստակած է մուկեր և առնէտներ բռնելով: Ո՛հ, ինչ ծիծաղներ: Շուշան ալ ծիծաղեցաւ, բայց լալու պէս: Յարկորեղբայր դժուարաւ բռնեց իր խնդրքը. բայց Շուշան ներեց անոր. վան գի կիրակնօրեայ դպրոցէն ետքը եկաւ և ըսաւ, "Շուշան, կ'ուզե՞ս մեր մուկերուն համար ալ բան մը ընել, անոնք մեր տունը լեցուցած են, և մենք պղտիկներ չունինք որ հոգ տանին թակարդներուն, և հօրաքոյրը լուսիս շատ գործ ունի, ես ալ կազ

լայ ազատուիլ: Տեղ մը ժայռերը գետէն մինչև 700 կանգուն վեր կը բարձրանան. Գանետին վրայ նաւարկողներու դիտած բաներէն մէկը սա է որ կեանք գրեթէ բնական անոր սահմաններուն մէջ: Ոչ չորքոտանի տեսնուած է հոն և ոչ թռչուն բացի մասնաւոր տեսակ մը չղջիկէ:

լայ ազատուիլ: Տեղ մը ժայռերը գետէն մինչև 700 կանգուն վեր կը բարձրանան. Գանետին վրայ նաւարկողներու դիտած բաներէն մէկը սա է որ կեանք գրեթէ բնական անոր սահմաններուն մէջ: Ոչ չորքոտանի տեսնուած է հոն և ոչ թռչուն բացի մասնաւոր տեսակ մը չղջիկէ:

ՀԱՄԲԱՒԱՒՈՐ ՏՂԱՔ
Խտալիոյ մէջ կին մը նաւերու աւազանն ինկաւ: Կինը գէր էր ու սաստիկ վախցաւ: Մարդոց բազմութեան

մէջէն ոչ մէկը համարձակեցաւ ջուրը նետուիլ անոր ետեւէն. բայց տղայ մը ջուրը ցատկեց գրեթէ կնոջ հետ և զանիկա ջուրին երեսը բռնեց մինչև որ աւելի զօրաւոր բազուկներ բռնեցին զանիկա: Ամէն մարդ ըսաւ թէ տղան շատ քաջ, շատ մարդասէր, շատ արագաշարժ է, բայց նաև շատ յանդուգն, վասն զի խղճուելուն վրտանգը կար: Այս տղան էր Կարիպալտի, և եթէ կարգաք անոր կեանքը, պիտի տեսնէք թէ այս յատկութիւնները ցուցուց անիկա բոլոր կեանքին մէջ:

Տղայ մը ծաղիկները կը ճվէր անոնց գոյնները առնելու համար, և թիրոջի մէջ իր հօրը տնակին ճերմակ կողմը նկարեց ամէն տեսակ պատկերներով, որոնց վրայ զարմանքով կը նայէին լեռնաքնակ գեղացիները: Ան էր թիցիանօ մեծ արուեստագէտը:

Երեւոյնի պատկերահան մը տեսաւ փոքրիկ տղայ մը, որ կը դուարձանար պատկերներ շինելով իր ներկի թաղարը, վերձիւնները, ներկերու պնակը և նստարանը գործածելով և ըսաւ, «Այդ տղան օր մը զիս պիտի գերազանցէ»: Եւ այնպէս եղաւ, վասն զի ան էր Միքայէլ Անճէլօ:

Տղայ մը յուզիչ վէպ մը կը կարգար: Երբ անոր կէսին հասաւ, ըսաւ ինքնիրեն, «Այս չըլլար. ես շատ կը գրգռուիմ ատկէ, և աղէկ չեմ կրնար ուսման պարապիլ զանիկա կարգաէս ետքը», և «Ահա կ'երթայ», ըսելով գիրքը գետը նետեց: Ան էր Ֆիլիթէ Գերմանացի մեծ փիլիսոփան:

ՏՂՈՒ ՄԸ ԵՌԱՆՆԵՐ

Այն տղան որուն վրայով կը խօսինք, շատ բան չէր ընէր, բայց կ'ընէր ամէն ինչ որ կրնար, և գովելի գործեր: Անգամ մը ներշնչեց ուրիշներ, և արդիւնքը մեծ եղաւ. Երանի՛ թէ աւետարանի ամէն պաշտօնեայ ասանկ տղաք ունենար իր եկեղեցիին մէջ:

Փոքրիկ եկեղեցին ուր կը յաճախէին այս տղան և անոր ծնողքը, ունէր քարոզիչ մը որ շատ սիրելի էր ժողովրդին բոլոր գեւառահասակներուն. բայց եկեղեցւոյ անդամները հարուստ չէին, և անոնցմէ ոմանք անփոյթ էին իրենց խոստացած հոգեւոր տուրքը վճարելու կողմանէ, ուստի հովուին թոշակին մեծ մասը անվճար կը մնար: Խնդիրը բերուեցաւ գործի ժողովի մը

առջև ուր տղան հայրն ալ ներկայ էր, և խնդրին վրայով պատմեց ատուը: Տղան շատ անհանգիստ եղաւ ըսելով այդ պատմութիւնը:

«Մեր պատուելին իր թոշակը շատ նէ», ըսաւ, «Հայր, Պատուելին թոշակը պէտք է որ վճարուի»:

Տղան իր սնտուկին քով գնաց, որուն մէջ հաւաքած էր իր բոլոր ամառուան փոքրիկ խնայողութիւնները որոնցմով բախտի մը գնել որոշած էր, և ստակները սեղանին վրայ թափեց: Երեսուներկու դահեկան կար հան, «Ես առանց բախտի պիտի կենամ մինչև որ Պատուելին թոշակը վճարուի», ըսաւ: Հայրը առաւ ստակը և վրան աւելցուց ամէն ինչ որ կրնար, յետոյ ժողովրդին տունը պարտեցաւ և ըրաւ այդ պատմութիւնը: Օրը իրիկուն չեղած թոշակը ամբողջ վճարուեցաւ, և տղան երջանիկ եղաւ:

ամէնէն զարհուրելի արտայայտութիւնը Ջրհեղեղէն ի վեր:

Պատմութեան կ'երևնայ թէ ծառը Մամբրէի դաշտին մէջ էր, գերբունէ ոչ հեռու, և աւանդութիւնը կը ցուցնէ կաշնի մը իրրև բուն այն ծառը: Երանի վարի կողմը շատ խոշոր է և յայտնի է թէ անիկա շատ հին է: Երևութիւն նայելով փտելու, չորնալու վրայ է, բայց տակաւին ունի աճող ճիւղեր: Չանիկա պահպանելու համար բարբաթը ցանկապատ մը քաշուած է:


ՍԻՐԱԼԻՐ ՆԱՅՈՒԱԾՔԸ

Քանի մը տարի առաջ փոքրիկ աղջիկներու կարգի մը քննութեան ներկայ գտնուեցանք դպրոցական տարիի մը վերջը: Հանդիսականներու բազմութիւնը և ճոխ արգուալարքերը բական չփոթեցուցած էին պղտիկներուն յիշողութիւնը: Փոքրիկներէն մէկը շուարեցաւ մնաց, կակազեց, կեցաւ հարցումներու պատասխանելու միջոցին: Ճիշդ այդ տեսն անոր մայրը յառաջ քալեց բազմութեան մէջէն և նստաւ փոքրիկ աշակերտուհիներուն աջքին առջև: Մօր այդ լուին գէմքին սիրուն նայուածքը հանդարտեցուց աղջկան շփոթութիւնը: Անոր միտքը և լեզուն անմիջապէս սկսան նորէն գործել, չորջ գտնուած բազմութեան և տեսարանին բոլոր աղբեցութիւնը անհետացաւ և դասը նորէն միտքը եկաւ կատարելապէս իր կարգովը: Աղջկան քննութիւնը յաղթանակ մը եղաւ:

Այդ ժամանակէն ի վեր շատ անգամ, երբ կը տեսնեմ, կ'ըսէ այս պատմութիւնն ընողը, աշխարհիս աղուկէն և փորձութիւններէն շփոթած և պայքարող միտք մը, ինծի այնպէս կ'երևնայ թէ պատուէր մը կը տրուի մեզի մեր Երկնաւոր Հօր երեսը նախելու, վստահացնելով մեղ թէ ամէն բան աղէկ է: Նայուածքի մը մէջ ոչ միայն կեանք կայ բարի գործի մը սկզբնաւորութեան ատեն, այլ՝ ապահովիչ և վստահացնող աղբեցութիւն մը ամբողջ մեր կեանքի ասպարէզին մէջ:

ՎՈՒԻ

Ետեւեւ Կարմիր և Կարմիր համար
Ատենօք երկու ճգնաւորներ կային, Եղբայր Հիլարիոս և Եղբայր Վոնիփա:



ԱՐԲՈՒՆԱՄԻ ԿԱՂՆԻՆ

Երնդոց ժի. գլխուն մէջ կը կարգաւք թէ Արբահամ հիւրընկալեց այցելու հրեշտակներ ծառի մը տակ, ինչպէս կ'ըսուի 8 համարին մէջ: Նահապետը իր վրանը բացած էր մեծ ծառի մը ներքև, որպէս զի ցերեկը անոր հովանիին տակ նստի, ճիշդ ինչպէս մենք յաճախ տեսած ենք մարդոց ասանկ ընելը, վասն զի հոն աւելի հանդիստ կը վայելուէր քան վրանին մէջ: Հոն էր որ երկնաւոր հիւրերը նստան հանգիստ առնելու: Ինչ նշանաւոր դէպք էր այն այգելութիւնը, Հրեշտակները եկած էին Արբահամ նահապետին անոր իմացնելու համար պատահելիք երկու մեծ դէպքեր: Մէկն էր ծնունդը անոր իսահակ որդւոյն որմէ պիտի դար աշխարհի փրկիչը, խոստացուած սերունդը: Միւսն էր Սողոմոն և Գամբի կործանումը: Աստուածային տհաճութեան

